ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2746/02/24 ք. Երևան
17 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արշակ Պետրոսյանի, ծանոթանալով «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ-ի կողմից կայացված՝ «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 63 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«Ագաստ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ-ի կողմից կայացված՝ «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 63 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը Դատարանին հասանելի է դարձել 12.04.2024թ.:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 199-200, 234.5 հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Ագաստ» ՍՊ ընկերության ընդդեմ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժ/պ-ի կողմից կայացված՝ «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 63 որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և ‘Գնումների մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:
3. Թիվ ԵԴ2/2746/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում՝ 2024թ. հունիսի 03-ին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Արշակ Պետրոսյան

Digitally signed by PETROSYAN ARSHAK 1303730265

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am